

Ա. Ա. ՄԵԶՐԱՔՅԱՆ

ԿՈՐՆԳԱՆԻ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Թիթեռնածաղկավոր բույսերի պալարաբակտերիաների մոլորդիական ու ֆիզիոլոգիական հատկանիշների սպեցիֆիկ կողմերի ուսումնասիրությունը երկար ժամանակ եղել է հետազոտողների ուշադրության առարկան և ներկայումս էլ այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են.

Ինչպես ցույց են տալիս Փանոսյանի (1946), Պետրոսյանի (1944, 1953), Ազարյանի (1949), Կալվովյանի (1933), Միջուռտինի (1946, 1947, 1950) և ուրիշների աշխատությունները, տարբեր հողակիմայական պայմաններում աճող թիթեռնածաղկավոր բույսերի պալարաբակտերիաները և այլ հողի միկրօրդանիզմները տարբեր բնույթի սննդամիջավայրերում տալիս են իրարից խիստ տարբեր մորֆոլոգիական ու ֆիզիոլոգիական հատկանիշները. Նույնիսկ միենույն շրջանի տարբեր հողակիմայական պայմաններից մեկուսացված շտամներն ունեն իրարից խիստ տարբեր հատկանիշներ. Այդ հարցի լուսաբանումը կարևոր նշանակություն ունի պալարաբակտերիաների բիոլոգիական առանձնահատկությունները պարզաբանելու համար:

Նկատի ունենալով այդ հարցի կարևորությունը, մենք անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրելու չայկական ՍՍՌ Մարտունու շրջանի և մասսմար նոր Բայազետի տարբեր հողակիմայական պայմաններում մշակվող կորնգանի պալարաբակտերիաների մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշները. Այդ նպատակի համար մեկուսացրինք կորնգանի պալարաբակտերիաներից (ծաղկման շրջանում, նրա ցանքի երկրորդ տարում) 16 շտամ և դրանք աճեցրինք լորու ագարի, հողի, էքսարակտ մաննիտ ագարի, մասպեպտոնային ագարի, լորու էքսարակտի, մասպեպտոնային բուլյոնի, առանց լակմուսի ու լակմուսով կաթի, մասպեպտոնային ժեղատինի վրա, իսկ թթու և գաղ առաջացնելու հատկությունը որոշելու համար, դրանք աճեցրինք տարբեր շաքարային միջավայրերում:

Շտամներն աճեցնելուց հետո, ցանքի գլեթե երկրորդ օրվանից նկարագրական դիտողություններ ենք կատարել և տարբեր

սննդանյութերի վրա աճեցրած գաղութներից պըեպարատներ ենք պատրաստել միկրոսկոպիական դիտողությունների համար, որոնք կատարվել են առաջին 7 օրվա ընթացքում՝ ամեն օր, այնուհետեւ 2, ապա 3—4 օրը մեկ անգամ։ Փորձը տևել է մեկ ամիս։

Կրոնգանի պալարաբակտերիաների մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշների ուսումնասիրությունը ցույց է տվել նրանց աճման հետևյալ բնորոշ կողմերը։

№ 1 շտամը լորու ագարի վրա առաջին օրն ունի մանր կոկկանման ձողիկների ձեւ, հետագա դիտողությունների ժամանակ այդ ձողիկները վեր են ածվում բակտերոփիդ ձեւերի, միքանի օր հետո նրանց մոտ նկատվում են փոքր ինչ ձգված ու հաստացած ձողեր, որոնք մանրանում ու հատիկավորվում են, հետո ծերանում և վատ են ներկվում։ Այդ ծերացած բջիջները հետզհետեւ վեր են ածվում բակտերիալ ցանցի, որից առաջանում են կարճ ձողիկներ։ Արանք վերջում նորից երկարում և հատիկավորվում են։

№ 2 շտամի կուլտուրալ հատկությունը լորու ագարի միջավայրում որոշելիս՝ պարզվում է, որ նա առաջացնում է փայլուն, լորձնոտ, թույլ ուսուցքավոր, Յ մմ տրամագծով կաթնագույն հոսող գաղութներ։

Լորու ագարի, ինչպես և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա ուժեղ աճ է տալիս, իսկ մսապեպտոնային ագարի վրա տալիս է միջակ աճ։

Լորու էքստրակտի վրա աճելիս, հեղուկը ուժեղ պղտորում է, առաջացնելով փառ և փաթիլանման նստվածք։

Մսապեպտոնային բուլյոնում առաջացնում է ուժեղ պըզտորություն, փառ և նստվածք։

Առաջին օրերին կաթը փոփոխության չի ենթարկվում, վերջին օրերում առաջացնում է թույլ օզակավորում, իսկ գույնը սպիտակից փոխում է շագանակագույնից, թՀ-ը 6, 8-ից դարձնում է 8,0։

Լակմուսով կաթը սկզբում չի փոխում, բայց որոշ ժամանակից հետո նրա մեջ առաջացնում է թույլ օզակավորում։ Կաթի գույնն սկսում է մուգանաւ իսկ վերջում աստիճանաբար բացվելով՝ կապույտից գառնում է սպիտակ, ընդ որում թՀ-ը 6,8-ից բարձրանում է 8,0-ի։

Մսապեպտոնային ժելատինի վրա առաջին օրերին չի առում, վերջում տալիս է միջակ աճ, ժելատինը չի լուծում։

Օսլան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գաղ չի առաջացնում:

№ 4 շամամը լորու ագարի վրա առաջին օրը գոտկավորված համոգեն ձողիկների ձև ունի, որոշ ժամանակից հետո այդ ձողիկները մի փոքր երկարում են, ապա ծերանալով՝ վատ են ներկում, մի քանի օրից հետո նրանք նորից վեր են ածվում համոգեն ձողերի, որոնցից առաջանում են հատիկներ ու կոկկանման ձողեր, վերջում այդ բջիջները ծերանում և վակուումավորվում են:

Այս շամամը լորու ագարի միջավայրում առաջացնում է 3 մմ արամագծով, լորձնոտ, փայլուն, ուսուցքավոր կաթնագույն գաղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մասպեստոնային ագարի վրա ուժեղ աճ է տալիս:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է ուժեղ պղտորություն, լորձնային փառ և նստվածք:

Փորձի վերջում ուժեղ պղտորությունը դառնում է թույլ պղտորություն:

Մսապեպտոնային բուլյոնի մեջ սկզբում տալիս է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք, վերջում ուժեղ պղտորությունը դառնում է թույլ պղտորություն:

Կաթի մեջ առաջացնում է թույլ օղակավորում. կաթի գույնը սպիտակից փոխվում է վարդագույնի, թՀ-ը 6,8-ից դարձնում է 5,10:

Լակմուսով կաթը սկզբում դարձնում է բաց սպիտակ գույնի, այնուհետև մոխրագույն, իսկ վերջում մոխրակապտագույն, թՀ-ը 6,8-ից բարձրանում է 8,0-ի:

Մսապեպտոնային մելատինի վրա առաջին օրերը տալիս է թույլ աճ, հետագայում ուժեղանում է աճը, մելատինը չի լուրծում:

Օսլան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գաղ չի առաջացնում:

№ 5 շամամը լորու ագարի վրա առաջին օրերը լավ ներկված ձողիկների ձև ունի, որոնք հետագայում շրջապատվում են լորձ-

նային շերտով, որոշ ժամանակ անց այդ լորձնային շերտն անհետանում է և նորից առաջանում են գոտկավորված ձողիկներ, վերջիններս մի քանի օրից հետո սկսում են վատ ներկվել: Փորձի վերջում նորից առաջանում են լավ ներկվող գոտկավորված ձողիկներ:

Այս շտամը լորու ագարի վրա առաջացնում է լորձնոտ, փայլուն, ուռուցքավոր, կաթնագույն Յ մմ տրամագծով գաղութներ:

Լորու ագարի և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա ուժեղ աճ է տալիս:

Մսապեպտոնային ագարի վրա առաջին օրերը թույլ աճ է տալիս, վերջում միայն աճը մի փոքր ուժեղանում է:

Լորու էքստրակտի մեջ առաջին օրերին տալիս է առանց փառի ու նստվածքի թույլ պղտորություն, փորձի վերջում պըղտորությունը մի փոքր ուժեղանում է:

Մսապեպտոնային բույսոնի մեջ տալիս է թույլ պղտորություն և բարակ փառ, որը շարունակվում է մինչև փորձի վերջը՝ վերջում այդ պղտորությունը բոլորովին անհետանում է և հեղուկը պարզվում է. լուծույթի հատակին փոքր քանակությամբ նստվածք է առաջանում:

Կաթի մեջ առաջին օրերը տալիս է թույլ օղակավորում, որը հետագայում ուժեղանում է. օղակի լայնությունը հասնում է մինչև 8 մմ-ի, անջատվում է սպիտակ գույնի շիճուկ, որի գույնը հետագայում փոխվում է սպիտակից վարդագույնի, քՀ-ը 6,8-ից իջնում է 5,10-ի:

Լակմուսով կաթը առաջին օրերին փոքր ինչ մոռգացնում է, առաջանում է թույլ օղակավորում, կաթի գույնը փոխում է բաց ամպագույնի, իսկ վերջում՝ սպիտակի, քՀ-ը 6,8-ից բարձրանում է 8-ի, հետագայում նորից իջնում է 6,8-ի:

Մսապեպտոնային ժելատինի վրա տալիս է թույլ աճ, ժելատինը փոփոխության չի հնթարկում:

Օպան հիգրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի միջավայրում թթու և գազ չի առաջացնում, իսկ գլուկոզի միջավայրում փորձի վերջում թույլ թթու է առաջացնում:

Նե շտամը լորու ագարի վրա սկզբում ունի նուրբ գոտկավորված ձողիկների ձև, որոնք մի քանի օրից հետո վեր են

ածվում երիտասարդ, սակայն չներկված ձվաձեւ բջիջների, հետագայում այդ բջիջներից առաջանում են հաստ ձողեր և սրանցից՝ նորից ձվաձեւ բջիջներ, վերջիններս սկսում են վատ ներկվել, իսկ վերջում նորից առաջանում են ձվաձեւ, սակայն լավ ներկված բջիջներ:

Այս շատամը լորու ագարի վրա առաջացնում է լորձնոտ, փայլուն, ուսուցքավոր, կաթնագույն 7,8 մմ տրամագծով գաղութներ:

Լորու ագարի և հողի էքստրակտ ագարի վրա տալիս է ուժեղ աճ, իսկ մսապեպտոնային ագարի վրա՝ շատ թույլ աճ:

Լորու էքստրակտի մեջ տալիս է միջակ պղտորություն և նստվածք:

Հեղուկը վերջում բոլորովին պարզվում է:

Մսապեպտոնային բուլյոնը մինչեւ փորձի վերջը փոփոխության չի ենթարկվում:

Կաթի մեջ սկզբում տալիս է թույլ օղակավորում, որն ուժեղանալով՝ հասնում է 6 մմ-ի, սակայն կաթն էական փոփոխության չի ենթարկվում:

Լակմուսով կաթի մեջ առաջին օրերին ոչ մի փոփոխություն չի առաջացնում, վերջում կաթի գույնը դառնում է մուգ, որը շարունակում է այնպես մնալ մինչեւ փորձի վերջը, թիւ 8-ից բարձրանում է, մսապեպտոնային մելատինի վրա չի աճում:

Օսլան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գազ չի առաջացնում:

Այս շատամը լորու ագարի վրա առաջին 7 օրերին հոմօգեն, դոսկավորված ձողիկների ձև ունի, որոնք հետո ծերանալով՝ վատ են ներկվում:

Այս շատամը լորու ագարի միջավայրում առաջացնում է լորձնոտ, փայլուն, թեթև ուսուցքավոր, 2 մմ տրամագծով գաղութներ, լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա հենց առաջին օրերից տալիս է ուժեղ աճ:

Մսապեպտոնային ագարի վրա տալիս է թույլ աճ, վերջում աճն ուժեղանում է:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է ուժեղ պղտորություն, հաստ փառ և նստվածք, վերջում պղտորությունը պարզվում է:

Մսապեպտոնային բուլյոնում սկզբում տալիս է թույլ պըզ-տորություն, փառ և նստվածք. վերջում պղտորությունն ուժեղանում է:

Կաթի մեջ երկար ժամանակ փոփոխություն չի առաջացնում, վերջում միայն առաջանում է թույլ՝ և մմ լայնության օդակավորում:

Կաթի գույնը սպիտակից փոխում է վարդագույնի, թՀ-ը 6,8-ից դառնում է սկզբում 5,46, ապա՝ 7,8:

Լակմուսով կաթը առաջին օրերին մուգացնում է, իսկ վերջում կապույտից փոխում է սպիտակի, թՀ-ը 6,8-ից բարձրանում է 8-ի, վերջում դառնում է 7,04:

Մսապեպտոնային ժելատինի վրա սկզբում տալիս է թույլ, վերջում ուժեղ աճ, ժելատինը չի լուծում:

Օսլան հիտրուիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գաղ չի առաջացնում:

Այ շտամը լորու ագարի վրա ունի ձողիկների ձև, որոնք միքանի օրից հետո բարակում, հետագայում գոտկավորվում, ապա վերեն ածվում բակտերիոֆի ձեռքի, որոնց շարքում նկատվում են նաև գոտկավորված ձողիկներ. 6 օր հետո այդ ձեռքն անհետանում են, առաջանում է բակտերիալ ցանց, որից հետագայում նորից առաջանում են գոտկավորված, վերջում վատ ներկվող ձողիկներ:

Այս շտամը լորու ագարի միջավայրում առաջացնում է 6 մմ տրամագիծ ունեցող, փայլուն, լորձնոտ, թույլ ուռուցավոր գաղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մսապեպտոնային ագարի վրա տալիս է ուժեղ աճ: Ի տարրերություն վերևում նկարագրված շտամների, այս շտամը դիտողության հենց առաջին օրից մսապեպտոնային ագարի վրա ուժեղ աճ է տալիս:

Լորու էքստրակտը և մսապեպտոնային բուլյոնը ուժեղ պղաորվում են և առաջանում է օդակավորում ու նստվածք: Հեղուկի պղտորությունը մնում է մինչև վերջ:

Կաթի մեջ առաջացնում է սկզբում թույլ օդակավորում, ապա կաթը մակարդվելով՝ տալիս է սպիտակ շիճուկ:

Լակմուսով կաթի մեջ առաջացնում է թույլ օդակավորում, վերջում կաթը մակարդվում է, դառնում է նախ վարդագույն,

ապա աստիճանաբար բացվելով՝ սպիտակում է, բայց մի քանի օրից հետո նորից փոխվում է վերդագույնի:

թՀ-ը 6,8-ից իջնում է 5,40-ի, ապա նորից բարձրանում է 6,8-ի: Մասպեստոնային ժելատինի վրա տալիս է ուժեղ աճ, ժելատինը չի լուծում:

Օպան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում առաջացնում է

թթու և գազ:

№ 9 շամամը լորու ագարի վրա լավ ներկված, հոմոգեն գոտի կալորիզած ձողիկների ձև ունի, որոնք սկզբում վատ են ներկվում, իսկ մի քանի օրից հետո նորից վերածվում են լավ ներկվող հոմոգեն գոտիկավորված ձողիկների:

Այս շամամը լորու ագարի վրա տալիս է 10 մմ տրամագծով փայլուն, լորձնուտ, ուսուցքավոր կաթնագույն գաղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մասապետոնային ագարի վրա առաջին օրերին տալիս է թույլ աճ, վերջում այդ երեք միջավայրում աճն ուժեղանում է:

Լորու էքստրակտի մեջ ուժեղ պղտորություն, փառ և նըստվածք է առաջացնում, բայց փորձի վերջում հեղուկը նորից լրիվ պարզվում է:

Մասպետոնային բուլյոնի մեջ առաջին օրերին տալիս է շատ թույլ պղտորություն, փորձի վերջում պղտորությունն ուժեղանում է, առաջանում են նաև փառ ու փաթիլանման նոտիվածք: Հետագայում հեղուկը փոքր ինչ պարզվում է:

Կաթի մեջ սկզբում փոփոխություն չի առաջացնում, վերջում առաջացնում է թույլ օղակավորում: Կաթի գույնը սպիտակից փոխվում է վարդագույնի, իսկ հետագայում բաց-շագանակագույնի: Կաթի թՀ-ը 6,8-ից իջնում է 5,40-ի, սակայն որոշ ժամանակից հետո նորից բարձրանալով՝ հասնում է 8,0-ի:

Լակմուսով կաթի գույնն սկզբում մուգանում է, վերջում բացվելով՝ դառնում է բաց-մոխրագույն և ապա՝ շագանակագույն: Կաթի թՀ-ը 6,8-ից բարձրանում է 7,59-ի:

Մասպետոնային ժելատինի վրա սկզբում տալիս է թույլ վերջում ուժեղ աճ, ժելատինը չի լուծում:

Օպան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարողի և գլուկոզի միջավայրերում թթու և դադ չի առաջացնում:

Ն 10 շտամը լորու ագարի վրա լավ ներկված, գոտիկալոր-ված ձողիկների ձև ունի, որոնք հետագայում ծերանալով՝ վաս-են ներկվում:

Այս շտամը լորու ագարի վրա տալիս է 10 մմ արամագծով, փայլուն, լորձնոտ, ուռուցքավոր կաթնագույն դաղութներ:

Լորու ագարի վրա առաջին օրերին տալիս է միջակ, հետա-գայում ուժեղ աճ:

Հողի էքստրակտ մաննիտ ագարի և մսապեպտոնային ագա-րի վրա տալիս է սկզբում թույլ, իսկ վերջում ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ տալիս է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք:

Մսապեպտոնային բույսոնի մեջ սկզբում տալիս է միջակ պղտորություն, փառ և նստվածք. հետագայում պղտորությունն-ուժեղանում է, սակայն փորձի վերջում հեղուկը պարզվում է:

Կաթի մեջ առանձին էական փոփոխություն չի առաջաց-նում, միայն գույնն է փոխում սպիտակից սկզբում վարդագույ-նի և ապա շագանակագույնի. Կաթի թհ-ը իջնում է 5,10-ի, վեր-ջում բարձրանում է 8-ի:

Լակմուսով կաթի գույնն առաջին օրերին մուգանում է, վերջում դարձնում է շագանակագույն:

Մսապեպտոնային ժելատինի վրա տալիս է ուժեղ աճ, ժե-լատինը չի լուծում:

Օսլան հիգրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարողի և գլուկոզի միջավայրերում թթու և դադ չի առաջացնում:

Ն 11 շտամը լորու ագարի վրա դիտողության առաջին օրերին ունի լորձնային շերտով շրջապատված ձողիկի ձև, որը մի քանի օրից հետո վերէ ածվում չներկված ձվածերջի, սա էլ հետագայում՝ նորից լորձունքով շրջապատված ձողին Այդ կապսուլավորված բջիջը վերջում փոխվում է երիտասարդ, սա-կայն չներկվող ձվածերջին:

Այս շտամը լորու ագարի միջավայրում տալիս է 3 մմ արա-մագիծ ունեցող փայլուն, լորձնոտ, ուռուցքավոր, կաթնագույն դաղութներ:

Լորու ագարի և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա տա-

Ախս է ուժեղ աճ, մինչդեռ մսապեպտոնային ագարի վրա բոլորով վին չի աճում:

Լորու էքստրակտի մեջ տալիս է ուժեղ պղտորություն, լորձնային փառ և նոտվածք: Փորձի վերջում հեղուկը լրիւ չի պարզված:

Մսապեպտոնային բուլյոնի մեջ չի աճում:

Կաթի մեջ առաջացնում է թույլ, 2 մմ լայնությամբ օղակավորում և կաթը դարձնում է սկզբում վարդագույն, իսկ վերջում՝ շագանակագույն: Լակմուսով կաթի մեջ առաջացնում է թույլ օղակավորում, կաթի գույնը մուգանում է:

Մսապեպտոնային ժելատինի վրա չի աճում:

Օսլան հիդրոլիզի չի հնթարկում:

Մախարողի և գլուկոզի միջավայրերում թթու և դագ չի առաջացնում:

№ 12 շտամը լորու ագարի վրա սկզբում լավ ներկված, գոտիավորված ձողիկի ձեւ ունի, հետագայում սկսում է վատ ներկվել, վերջում նորից լավ ներկվող ձողիկի է վերածվում:

Այս շտամը լորու ագարի միջավայրում տալիս է փայլուն, ուսուցքավոր, կաթնագույն Յ մմ տրամագիծ ունեցող գաղութներու լորու ագարի և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա տալիս է ուժեղ, իսկ մսապեպտոնային ագարի վրա՝ թույլ աճ:

Լորու էքստրակտի մեջ տալիս է ուժեղ պղտորություն և թույլ փառ, փորձի վերջում՝ հեղուկը պարզվում է:

Մսապեպտոնային բուլյոնի մեջ չի աճում:

Կաթի մեջ թույլ օղակավորում է առաջացնում:

Լակմուսով կաթի գույնը առաջին օրերին փոխում է ամպագույնի, վերջում՝ սպիտակի:

Մսապեպտոնային ժելատինի վրա տալիս է թույլ աճ, ժելատինը չի լուծում:

Օսլան հիդրոլիզի չի հնթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Մախարողի և գլուկոզի միջավայրերում թթու և դագ չի առաջացնում:

№ 13 շտամը լորու ագարի վրա գոտիավորված ձողիկների ձեւ ունի, որոնք մի քանի օրից հետո սկսում են վատ ներկվել իսկ վերջում նորից առաջանում են լավ ներկված, գոտիավորված ձողիկներ:

Այս շտամը լորու ագարի միջավայրում տալիս է Յ մմ տրա-

մագծով փայլուն, լորձնոտ, թեթև ուսուցքավոր, կաթնագույն գաղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մսապեպտոնային ագարի վրա տալիս է սկզբում միջակ, վերջում ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ տալիս է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք. վերջում պղտորությունը թուլանում է:

Մսապեպտոնային բույյոնի մեջ տալիս է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք. վերջում ուժեղ պղտորությունը թուլանում է:

Կաթի մեջ առաջացնում է Յ մմ լայնությամբ օղակավորում:

Կաթի գույնը առաջին օրերին մուգանում է, վերջում դառնում է շադանակագույն: թԻ-ը 8,0-ից բարձրանում է:

Լակմուսով կաթի գույնն սկզբում բացանում է, վերջում դառնում է կեղտոս սպիտակավուն և ապա՝ բաց-շադանակագույն:

Մսապեպտոնային ժելատինի վրա սկզբում տալիս է թույլ, վերջում մի փոքր ուժեղացած աճ:

Ժելատինը չի լուծում:

Օսլան հիդրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գազ չեն առաջացնում:

№ 14 շտամը լորու ագարի վրա լավ ներկվող, գոտկավորվող ձողիկների ձև ունի, 9 օրից հետո, գոտկավորվող ձողերի հետ միասին, առաջանում են նաև չներկված, սակայն երիտասարդ ձվածե բջիջներ, որոնք հետագայում վատ են ներկվում, ապա վեր են ածվում բակտերոիդ ձևերի, 25 օրից հետո վերջին ձևերն անհետանում են և մնում են միայն գոտկավորված ձողիկներ:

Այս շտամը լորու ագարի վրա տալիս է փայլուն, լորձնոտ, ուսուցքավոր, կեղտոտ սպիտակավուն գույնի, 4 մմ տրամադիծ ունեցող գաղութներ:

Լորու ագարի և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա տալիս է ուժեղ աճ, մսապեպտոնային ագարի վրա սկզբում տալիս է թույլ, վերջում ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք, վերջում հեղուկը նորից պարզվում է:

Մսապեպտոնային բուլյոնը ուժեղ պղտորում է, առաջացնում է փառ և նստվածք:

Կաթը մակարդում է և առաջացնում է սպիտակ շիճուկ, լակմուսով կաթի վերին մասը օղակաձև մուգացնում է, վերջում մակարդում է, գույշն էլ փոխում է վարդագույշնի, որի ժամանակ նկատվում է կանաչ գույշնի շիճուկ:

Մսապեպտոնային մելատինը լուծում է:

Օսլան հիգրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները ցանքի 10-րդ օրը վերականգնում է:

Սախարոզի միջավայրում թթու և գազ չի առաջացնում, իսկ գլուկոզի միջավայրում առաջացնում է:

№ 15 շտամը լորու ագարի վրա սկզբում լավ ներկվող, գոտկավորված ձողիկների ձեւ ունի, որոնք մի քանի օր հետո սկսում են վատ ներկվել, սակայն վերջում նորից վեր են ածվում լավ ներկվող, գոտկավորվող ձողիկների:

Այս շտամը լորու ագարի վրա տալիս է փայլուն, լորձնառ, 3 մմ տրամագիծ ունեցող գաղութներ:

Լորու ագարի և հողի էքստրակտ մաննիտ ագարի վրա սկրզբում աղալիս է միջակ, վերջում ուժեղ աճ, իսկ մսապեպտոնային ագարի վրա սկզբում շատ թույլ վերջում ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է ուժեղ պղտորություն, փառ և նստվածք:

Կաթի մեջ թույլ օղակավորում է առաջացնում, իսկ գույշնը սկզբում մուգացնում, վերջում շադանակագույն է դարձնում:

Լակմուսով կաթի մեջ զարդանալիս այն աստիճանաբար գարձնում է մոխրագույն և ասպա՛ շադանակագույն:

Մսապեպտոնային մելատինի վրա սկզբում տալիս է թույլ վերջաւմ ուժեղ աճ: Սակայն մելատինը չի լուծում:

Օսլան հիգրոլիզի չի ենթարկում:

Նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գազ չի առաջացնում:

№ 16 շտամը լորու ագարի վրա առաջին օրերին հոմոգեն գոտկավորված ձողիկների ձեւ ունի, իսկ մի քանի օր հետո այդ ձողիկներից մի քանիսը վեր են ածվում բակտերոսիդ ձերի և ձվաձև չներկվող բջիջների, վերջիններս նորից՝ գոտկավորված ձողերի:

Այս շտամը լորու ագարի վրա տալիս է 2 մմ տրամագիծ
ունեցող փայլուն, ուսուցքավոր, կաթնագույն գաղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մսա-
պեպտոնային ագարի վրա տալիս է ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է ուժեղ պղտորու-
թյուն, փառ և նստվածք:

Մսապեպտոնային բուլյոնի մեջ նույնպես տալիս է ուժեղ
պղտորություն, փառ և նստվածք:

Կաթը մակարդում է, առաջացնում է զեղնականաչափույն
շիճուկ:

Լակմուսով կաթի գույնը սկզբում փոխում է վարդագույ-
նի, վերջում կաթը մակարդելով՝ առաջացնում է կանաչափույն
շիճուկ:

Մսապեպտոնային ժելատինը լուծում է:

Օսլան հիդրոիզի չի ենթարկում:

Նիտրատները չեն վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գազ է
առաջացնում:

№ 17 շտամը լորու ագարի վրա լավ ներկված ձողիկների
ձև ունի, որոնք մասամբ դասավորված են շղթաների ձևով, մի-
քանի օրից հետո այդ բջիջները վեր են ածվում գոտիկավորված
ձողերի և ձվածե բջիջների:

Այս շտամը լորու ագարի միջավայրում տալիս է փայլուն,
լորձնոտ, ուսուցքավոր, և մմ տրամագծով կաթնագույն զա-
ղութներ:

Լորու ագարի, հողի էքստրակտ մաննիտ ագարի և մսա-
պեպտոնային ագարի վրա սկզբում տալիս է թույլ վերջում
ուժեղ աճ:

Լորու էքստրակտի մեջ առաջացնում է սկզբում թույլ օղա-
կավորում և պղտորություն, սակայն վերջում այդ պղտորությունն
ուժեղանում է և տալիս է փառ ու նստվածք: Հետագայում հե-
ղուկը նորից պարզվում է:

Մսապեպտոնային բուլյոնի մեջ տալիս է թույլ պղտո-
րություն և փոքր քանակով նստվածք: Պղտորությունը հետագա-
յում անցնում է, հեղուկը լրիվ պարզվում է:

Կաթի մեջ առաջացնում է թույլ օղակավորում, որը շա-
րունակվում է մինչև փորձի վերջը: Կաթի գույնը մնում է ան-
փոփոխ:

Լակմուսով կաթի մեջ երկար ժամանակ փոփոխություն չի առաջացնում, մի քանի օրից հետո գույնը մուգանում է, հետո դառնում է կապտա-մանուշակագույն:

ԲՀ-ը 7,0-ից բարձրանում է 8,0-ի, վերջում դառնում է 6,85:

Մսապեպտոնային մելատինի մեջ տալիս է թույլ աճ, մելատինը չի լուծում:

Օսլան հնթարկում է հիդրոլիզի, նիտրատները վերականգնում է, սախարոզի և գլուկոզի միջավայրերում դիտաղության առաջին օրերին թթու գաղ չի առաջացնում, վերջում գլուկոզի միջավայրում թթու և գաղ առաջացնում է:

№ 18 շտամը լորու ագարի վրա առաջին օրերին հոմոգեն գուտկավորված ձողիկների ձև ունի, իսկ մի քանի օր հետո առաջանում են նաև բակտերիոֆիներ, վերջում բակտերիոֆիները չեն երևում, գուտկավորված ձողիկներն էլ ծերանալով՝ վակուումավորվում են:

Այս շտամը լորու ագարի վրա տալիս է փայլուն, լորձնոտ, ուսուցքավոր, 7 մմ տրամագծով կաթնագույն գաղութներ:

Լորու ագարի, ինչպես և հողի էքստրակտ մաննիս ագարի վրա առաջին օրերին տալիս է թույլ, իսկ մի քանի օրից հետո ուժեղ աճ:

Մսապեպտոնային ագարի վրա ընդհանրապես թույլ է աճում:

Լորու էքստրակտի մեջ տալիս է թույլ պղտորություն, փառ և նստվածք:

Մսապեպտոնային բույսնի մեջ չի աճում, կաթի մեջ թույլ օգակալիորում է առաջացնում:

Լակմուսով կաթի գույնը մի փոքր մուգացնում է. մսապեպտոնային մելատինի մեջ տալիս է շատ թույլ աճ. մելատինը չի լուծում:

Օսլան հիդրոլիզի չի հնթարկում, նիտրատները չի վերականգնում:

Սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գաղ չի առաջացնում:

Այսպիսով, կորնգանի պալարաբակտերիաների մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշների ուսումնասերությունը պարզում է, որ նույն շրջանի, սակայն տարբեր հողակլիմայական պայմաններից մեկուսացված շտամներն իրարից տարբերվում են: Այդ տար-

բերությունը, մեր կարծիքով, պետք է վերագրել առանձին հողատիպերին:

Վերը թվարկված շտամները մեկուսացվել են, հիմնականում, Մարտունու շրջանի մուդշագանակագույն, շագանակագույնու ու ուս հողերից: Այդ հողերն իրարից տարրերվում են կարրոնայնությամբ, հումուսի քանակով, կավային ու ավազային մասերի փոխհարաբերությամբ և այլ հատկություններով (տես աղյուսակ1):

Ինչպես երևում է նկար 1-ից, №-1 շտամը լորու ագարի վրա դիտողության առաջին օրն ունի մանր կոկվանման ձողերի ձև, 9 օրից հետո ձողերի հետ միասին նկատվում են նաև բակտերոփներ, հետագայում այդ ձողիկները փոքր ինչ երկարում են, ապա մանրանում և հատիկավորվում, փորձի վերջում բակտերիացանց է առաջանում:


№ 8 շտամը լորու ագարի վրա դիտողության առաջին օրը ունի հոմոգին ձողիկների ձև, որոնք 9 օր հետո գոտկավորվում են, ապա վեր են ածվում բակտերոփների, ըստ որում տեսողական դաշտում գերակշռող մասը բակտերոփներ են, կան նաև փոքր քանակությամբ գոտկավորված ձողիկներ: Վերջում առաջանում է բակտերիալ ցանց, որից սկիզբ են առնում գոտկավորված ձողիկներ:

№ 14 շտամը լորու ագարի վրա դիտողության առաջին օրը գոտկավորված ձողիկների ձև ունի, 9 օրից հետո այդ գոտկավորված ձողիկների հետ միասին նկատվում են նաև ձվաձև չներկված, սակայն երիտասարդ բջիջներ, որոնք հետագայում վատ են ներկվում, մի քանի օրից հետո առաջանում են գոտկավորված ձողիկներ, վերջում նորմալ բջիջների թիվը փոքրանում է, մեծ մասը բակտերոփներ են:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, միևնույն հասակ ունեցող, այսինքն՝ ցանքից հետո դիտողության նույն օրերին նկարագրված շտամները տալիս են մորֆոլոգիական տարրեր ձեւեր նույնը կարելի է ասել և բոլոր մյուս շտամների մասին:

Շտամների մորֆոլոգիական հատկանիշների տարրերության հետ մեկտեղ, տարրերություններ են նկատվում նաև նրանց փիոլոգիական հատկանիշների միջև:

Ստացված ավյաներից երեսում է, որ ուսումնասիրված 1 շտամները մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշներով իրարի խթատ տարրերվում են:



Նկ. 1. Լոբու. ազար-ազար միջակայթ միջակայթ լեռներ:

Հողերի տեսակները և հումուսի 0/0-ը

Հողերի տեսակներ	Հողերի նկարագրությունը	Հումուսի 0/0-ը
1*	Միջին ենթակավային, ուժեղ կարբոնատային, թույլ կմախ-քային, մուգ-շաղանակագույն հող	2,21
4	Թեթև ենթակավային, ոչ կարբոնատային, միջին կմախքային սեահող	3,28
5	Միջին ենթակավային, ոչ կարբոնատային, ուժեղ կմախքային, մուգ-շաղանակագույն հող	2,20
6	Միջին ենթակավային, կարբոնատային, թույլ կմախքային սեահող	2,95
7	Թեթև ենթակավային, ուժեղ կարբոնատային, միջին կմախ-քային, էրողիայի ենթարկված շաղանակագույն հող	1,09
8	Միջին կավային ոչ կարբոնատային, թույլ կմախքային, էրո-ղիայի ենթարկված սեահող	2,59
9	Մանր ենթակավային, ուժեղ կարբոնատային, թույլ կմախքա-յին, էրողիայի ենթարկված շաղանակագույն հող	2,95
10	Միջին ենթակավային, ոչ կարբոնատային, թույլ կմախքային, մուգ-շաղանակագույն հող	2,57
11	Թեթև ենթակավային, ուժեղ կարբոնատային, ուժեղ կմախքա-յին, էրողիայի ենթարկված սեահող	2,21
12	Մանր ենթակավային, ոչ կարբոնատային, թույլ կմախքային, էրողիայի ենթարկված սեահող	3,32
13	Միջին ենթակավային, կարբոնատային, թույլ կմախքային, էրողիայի ենթարկված սեահող	1,09
14	Թեթև ենթակավային, ոչ կարբոնատային, թույլ կմախքային, մուգ-շաղանակագույն հող	3,35
15	Միջին ենթակավային, կարբոնատային, միջին կմախքային, էրողիայի ենթարկված սեահող	2,95
16	Միջին ենթակավային, կարբոնատային, թույլ կմախքային, էրողիայի ենթարկված սեահող	3,90
17	Միջին ենթակավային, ոչ կարբոնատային, թույլ կմախքային, սեահող	2,68
18	Միջին ենթակավային, ոչ կարբոնատային, թույլ կմախքային, սեահող	3,32

* Հողվածում նշված շտամների Ա-ները համապատասխանում են հո-դերի Ա-ներին:

Շատամների մորֆոլոգիական հատկանիշների ուսումնասիրության ժամանակ, որոշ շատամների միջև, կարծես, նմանությունն նկատվում էր Օրինակ՝ № 9 և № 10 շատամները մորֆոլոգիապես դրեթե նման են իրար, նույնը կարելի է ասել նաև № 12, 13 և 15 շատամների վերաբերյալ վերջիններիս մորֆոլոգիական ձևերը և նրանց զարգացման ընթացքում նկատվող փոփոխությունները համեմատելին՝ մեծ նմանություն է նկատվում, սակայն այս շատամների փիզիոլոգիական առանձնահատկությունների խորն ու մանրազնին ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրանց միջև նմանության հետ մեկտեղ, որոշ տարրերություն, այնուամենայնիվ, նկատվում է: Օրինակ՝ ագարային միջավայրերում № 9 շատամն ավելի ինտենսիվ է աճում, քան № 10 շատամը, լուրու էքսարակափ և մսապեպտոնային բուլյոնի մեջ № 9 շատամը տալիս է ուժեղ պղասրություն, որը հետո լրիվ չի պարզվում, մինչդեռ № 10 շատամի աճի գեղքում թեպետ հեղուկը պղասրում է, բայց վերջում նորից լրիվ պարզվում է:

Նույնը կարելի է ասել նաև № 12, 13, 15 շատամների մասին, որոնք մորֆոլոգիապես թեև նմանվում են իրար, բայց Փիզիոլոգիական հատկանիշներով, այնուամենայնիվ, տարրերում են իրարից: Օրինակ՝ №№ 13 և 15 շատամներն ուժեղ պղասրում են բուլյոնը, մինչդեռ № 12 շատամը այդ միջավայրում բուլորովին չի աճում: Առաջին երկուսն ուժեղ պղասրելով բուլյոնը, իրարից տարրերում են նրանով, որ № 15 շատամի գեղքում ուժեղ պղասրությունը շարունակում է մնալ միջև փորձի վերջը, մինչդեռ № 13 շատամի գեղքում միայն թույլ պղասրություն է մնում: Այսուհետեւ մսապեպտոնային մելատինի վրա այս շատամները տարրեր ինտենսիվությամբ են աճում՝ № 12 շատամն աճում է թույլ, № 13-ը՝ միջակ, իսկ № 15-ը՝ ուժեղ:

Կորնգանի պալարաբակտերիաների վերոհիշյալ № 16 շատամների վերաբերյալ կարելի է տալ հետեւյալ համառոտ բնութագիրը.

1. Լորու պարագի և հողի էքսարակտ մաննիտ ագարի վրա բուլոր շտամներն աճում են ուժեղ, տարրերությունը շտամների միջև միայն աճի արագության մեջ է, ըստ որում շտամների մի մասը, համեմատած մյուսների հետ, ավելի արագ են աճում:

2. Լորու էքսարակտի մեջ ևս այդ շտամներն աճում են տարրեր ինտենսիվությամբ, առաջացնելով ուժեղ, միջակ և թույլ պղասրություն, ըստ որում №№ 1, 9, 12, 14, 15 և 17 շտամների աճի գեղքում, չնայած հեղուկն ուժեղ պղասրվում է, բայց

փորձի վերջում նորից պարզվում է, մինչդեռ ՆԵ 4, 7, 8, 10, 11, 13 և 16 շտամների աճի դեպքում առաջացած պղտորությունը մինչև փորձի վերջը մնում է:

ՆԵ 6 և 18 շտամները միջակ պղտորություն են առաջացնում, իսկ Ն 5-ը՝ թույլ պղտորություն:

3. Մսապեպտոնային ագարի, ինչպես և մսապեպտոնային բուլյոնի մեջ կորնգանի պալարաբակտերիաների հիշված շտամներն աճում են տարբեր ինտենսիվությամբ, տալով առաջին դեպքում ուժեղ, միջակ և թույլ աճեցողություն, իսկ երկրորդ դեպքում՝ ուժեղ, միջակ և թույլ պղտորություն: Կան նաև շտամներ, որոնք այդ միջավայրերում բոլորովին չեն աճում:

Մյուլերը և Շտապը (1925) իրենց աշխատանքներում նշում են, որ կորնգանի պալարաբակտերիաները թույլ են աճում մսապեպտոնային ագարի վրա, մեր և Պետրոսյանի փորձերից պարզվում է, որ դա կախված է շտամի առանձնահատկությունից:

4. Պալարաբակտերիաների կողմից մսապեպտոնային ժելատինը լուծելու վերաբերյալ ևս տարբեր հեղինակներ հայտնում են տարբեր կարծիքներ, ոմանք (Բեյերինկը, Հիլտները, Կիլերմանը, Ցիպֆելը, Վիլսոնը և ուրիշները) գտնում են, որ պալարաբակտերիաներն ընդհանուր առմամբ ժելատինը չեն լուծում, իսկ ոմանք էլ (Ֆրեդը, Դավենպորտը և Շտապը) գտնում են, որ նրանք ժելատինը լուծում են: Մյուլերը և Շտապը նշում են, որ կորնգանի պալարաբակտերիաները ժելատինը կամ բոլորովին չեն լուծում և կամ լուծում են շատ դանդաղ (տես Պետրոսյանի 1944 թ. աշխատությունը),

Մեր փորձերում կորնգանի պալարաբակտերիաների շտամների մի մասը (ՆԵ 14 և 18) լուծում են ժելատինը, մյուլաները չեն լուծում:

5. Դրականությունից հայտնի է, որ պալարաբակտերիաները կաթի մեջ պիգմենտացիա չեն առաջացնում:

Հստ Լյոնիսի՝ նույնիսկ այս հատկանիշով կարելի է տարբերել պալարաբակտերիաները ուստիորաբակտերիաներից, ըստ որում ուսդիրաբակտերիաները կաթի մեջ առաջացնում են լայն օղակ և շագանակագույն, երբեմն էլ գորշագույն նստվածք, իսկ պալարաբակտերիաները տալիս են ավելի բարակ օղակ և ոչ մի գեղքում պիգմենտ չեն առաջացնում: Մեր փորձերում, ինչպես տեսանք, կորնգանի պալարաբակտերիաները կաթը գունավորում են տարբեր գույներով:

6. Շաքարային միջավայրերում պալարաբակտերիաների գաղ առաջացնելու և միջավայրի ուսակցիայի փոփոխման ուղղությամբ հայտնի են որոշ աշխատանքներ. Օրինակ՝ Սահմանաբնականերել է թթուների առաջացումը առվույտի պալարաբակտերիաների մոտ. Այդ հարցով զբաղվել են նաև Բոլգուինը, Ֆրեդը և ուրիշները, ըստ որոնց պալարաբակտերիաները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) միջավայրը թթվեցնողների և բ) հիմնային դարձնողներին:

Ինչ վերաբերում է պալարաբակտերիաների գաղ առաջացնելու հատկությանը, ապա պետք է նշել, որ պալարաբակտերիաների գաղ առաջացնելու հատկությունը գրականության մեջ երկար ժամանակ դիտվում էր որպես կուլտուրայի կեղտոտման հետևանք. և միայն վերջին ժամանակները լույս տեսած մի քանի աշխատություններում կան ակնարկներ այն մասին, որ պալարաբակտերիաների որոշ շտամների մոտ այդ հատկությունը երևան է գալիս պարբերաբար. այդպիսի տվյալների մենք հանդիպում ենք Պետրոսյանի աշխատանքներում (1944):

Մեր փորձերում կորնգանի պալարաբակտերիաների թթու և գաղ առաջացնելու հատկությունը որոշելիս, պարզվեց, որ №№ 8, 14, 16 և 17 շտամները դուկողի միջավայրում առաջացնում են թթու և գաղ, իսկ սախարոզի միջավայրում թթու և գաղ առաջացնում են միայն №№ 8 և 16 շտամները. № 5 շտամը դուկողի միջավայրում միայն թթու է առաջացնում, իսկ մնացած բոլոր շտամները վերը հիշված երկու միջավայրում թթու և գաղ չեն առաջացնում:

7. Պալարաբակտերիաների նիտրատներ վերականգնելու հատկությունը գեռ շատ վաղուց նկարագրել են մի շարք հեղինակներ, ըստ որում նրանց մի մասը գտնում է, որ պալարաբակտերիաները նիտրատները չեն վերականգնում. այդ կարծիքին են, օրինակ, Պուլխանը, Հիլսը, Վիլսոնը, Մյոււները՝ Ֆրեդը, Կելլերմանը և Բեկվիդը, Հանսենը, Ցիպֆելը, Մյուլերը և Շտապը հակոռակ կարծիքի են, ըստ որում Մյուլերը և Շտապը նշում են, որ նիտրատների վերականգնումը կախված է պալարաբակտերիաների տեսակներից, օրինակ՝ ըստ նրանց, վիկի, երեքնուկի և լորուխմբի պալարաբակտերիաները նիտրատները վերականգնում են, սոյայի և բորինի պալարաբակտերիաները նիտրատները վերա-

նի, առվույտի և դոննիկի խմբի պալարաբակտերիաները նիտրատները չեն վերականգնում:

Կորնգանի պալարաբակտերիաների նիտրատներ վերականգնելու հատկությունը, ինչպես պարզվում է թե մեր և թե Պետրոսյանի (1944) փորձերից, կախված է շտամի բիոլոգիական առանձնահատկությունից. օրինակ՝ №№ 14 և 17 շտամները մեր փորձերում վերականգնում են նիտրատները, մինչդեռ մնացած բոլոր շտամները չեն վերականգնում:

Այսպիսով, ամփոփելով Մարտունու շրջանի տարրեր հողակլիմայական պայմաններից մեկուսացված կորնգանի պալարաբակտերիաների թվով 16 շտամների ուսումնասիրության տվյալները, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին:

1. Կորնգանի պալարաբակտերիաները մյուս պալարաբակտերիաներից տարրերվում են նրանով, որ նրանք, առվույտի ու դոննիկի պալարաբակտերիաների նման, թթվեցնում են լակմուսով կաթը և կարողանում են մսապեպտոնային ագարի և բուլյոնի միջավայրերում լավ աճել:

2. Կաթի մեջ աճելիս՝ կորնգանի պալարաբակտերիաները, բացի օղակավորում, պեպտոնացում և մակարում առաջացնելուց, տալիս են նրան նաև տարրեր գունավորումներ (բացվարդագույն, մոխրագույն, շագանակագույն):

3. Կորնգանի պալարաբակտերիաները ի տարրերություն մյուս պալարաբակտերիաների, կարող են սախարոզի և գլուկոզի միջավայրերում թթու և գազ առաջացնել:

4. Կորնգանի պալարաբակտերիաների որոշ շտամներ կարող են օսլան հիգրոլիզի ենթարկել:

5. Կորնգանի պալարաբակտերիաների մորֆոլոգիապես իրար նմանվող շտամները ֆիզիոլոգիական հատկանիշներով երբեմն իրարից տարրերվում են:

6. Տարրեր հողակլիմայական պայմաններում աճող կորնգանի պալարաբակտերիաները տարրեր բնույթի սննդամիջավայրերում տալիս են իրարից խիստ տարրերվող մորֆոլոգիական ու ֆիզիոլոգիական հատկանիշներ, որ պետք է բացատրել միջավայրի ազգեցությամբ և իրենց՝ շտամների բիոլոգիական առանձնահատկություններով:

Գ Ր Ա Շ Կ Վ Ե Ո Ւ Ր Յ Ո Ւ Յ Ե

- Ազարյան Է. Խ.** 1949. К биологии клубеньковых бактерий вик Армении. Микробиологический сборник, вып. 4, стр. 85.
- Ковровцева С. А.** 1933. Влияние типа почвы и влажности на рост и размножение клубеньковых бактерий. Труды Всесоюзного института сельскохозяйственной микробиологии, том V, стр. 96.
- Мишустин Е. Н.** 1947. Эколо-географическая изменчивость почвенных бактерий. Изд. АН ССР.
- Мишустин Е. Н. и Мирзоева В. А.** 1950. Растительные пояса гор и их отражение в составе бактериального населения почвы. Микробиология, том IX, вып. 4, стр. 299.
- Петросян А. П.** 1944. Клубеньковые бактерии эспарцетов Армянской ССР. Сборник трудов Института земледелия Академии наук АрмССР, стр. 46.
- Петросян А. П.** 1953. Влияние экотипов бактерий на урожай бобовых растений. Сообщение первое. Вопросы сельскохозяйственной и промышленной микробиологии, вып. 1 (VII), стр. 3.
- Fred Edwin, Broun A.** 1911—1912. Physiological study of the legume Bacteria. Annual Report of the Virginia Polytechnic Institute Agricultural Experiment station, p. 145.
- Kellerman Karl und Bechwith T. D.** Die Bacterien der Wurzelknöllchen der Leguminosen. Zent. Blatt für Bact., II Ab., Bd. 16, S. 540. Original referate.
- Muller A. und Stapp C.** 1925. Zur Biologie der Leguminosen Knolchenbakterien mit besonderer Berücksichtigung ihrer Artverschiedenheit. Sonderdruck aus den Arbeiten der biologischen Reichsanstalt für Land und Forwirtschaft, Vol. 14, Heft 4.

A. A. Megrabyan

Կ Բ Ի Օ Լ Ո Ւ Յ Ի Կ Հ Ա Մ Ա Կ Ա Վ Ո Ւ Յ Ե Բ Ա Կ Ե Ր Ե Վ Ո Ւ Յ Ե

Պ Ե Զ Յ Ո Ւ Յ Ե

Клубеньковые бактерии эспарцета по своим свойствам несколько отличаются от остальных клубеньковых бактерий и в этом отношении изучение этих бактерий представляет как теоретический, так и практический интерес.

Работами Мишустина, Паносяна, Петросян, Азарян, Ковровцевой и других доказано, что клубеньковые и другие почвенные бактерии, выделенные в разных почвен-

но-климатических условиях, по своим морфо-физиологическим свойствам резко отличны.

Изучение этого вопроса имеет существенное значение для выяснения биологических особенностей экотипов клубеньковых бактерий.

Наши исследования морфологических свойств шестнадцати штаммов клубеньковых бактерий эспарцета, выделенных в различных почвенно-климатических зонах Мартунинского района Армянской ССР, приводят к следующим основным выводам:

1. Клубеньковые бактерии эспарцета, подобно клубеньковым бактериям донника и люцерны, окисляют молоко с лактусом и растут хорошо на средах мясопептонного бульона и агара.

2. Клубеньковые бактерии эспарцета, кроме образования кольца, пептонизации и свертывания молока, обладают свойством выделять пигмент, благодаря чему молоко приобретает разную окраску (розовую, серую, бурю и т. д.).

3. Некоторые клубеньковые бактерии эспарцета, в отличие от остальных клубеньковых бактерий, в средах с сахарозой и глюкозой образуют кислоту, газ и гидролизируют крахмал.

4. Клубеньковые бактерии эспарцета, сходные между собой по морфологическим свойствам, могут отличаться физиологическими особенностями.

5. Штаммы клубеньковых бактерий эспарцета, выделенные в различных почвенно-климатических условиях Мартунинского района, по своим физиологическим, культуральным и другим свойствам различны, что объясняется влиянием условий внешней среды и биологическими особенностями штаммов.